

ԱրՊՀ խորհուրդը

Համալսարանի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գույակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

Համալսարանի խորհուրդն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմին է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

Համալսարանի խորհուրդը

- 1) քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն.
- 2) հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրերը.
- 3) լսում և գնահատում է համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը.
- 4) ընտրում է համալսարանի ռեկտորին.
- 5) քննարկում և սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում առաջարկություններ համալսարանի կանոնադրության կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.
- 6) հաստատում է իր աշխատակարգը, ռեկտորի ընտրությունների ընթացակարգը.

Համալսարանի խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից, սովորողների (ուսանողներ և ասպիրանտներ) ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի ու լիազորված մարմնի ներկայացուցիչներից:

Համալսարանի խորհուրդը կազմված է 28 անդամից:

Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը պետք է լինեն պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, որոնք առաջադրվում են կառուցվածքային ստորաբաժանումներից:

Կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներն առաջադրվում են դրանց աշխատողների ընդհանուր ժողովներում, իսկ ֆակուլտետներինը՝ դրանց խորհրդում: Ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների առաջադրած թեկնածուներն ընտրվում են համալսարանի գիտական խորհրդում:

Համալսարանի գործադիր մարմնում նշանակված անձը չի կարող լինել խորհրդի անդամ: Նա իրավունք ունի խորհրդի նիստերին մասնակցելու խորհրդակցական ձայնի իրավունքով:

Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը պետք է լինեն սովորողներ: Համալսարանի խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, յուրաքանչյուրից մեկական անդամ՝ բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող սովորողներից:

Համալսարանի ուսանողական խորհուրդը ֆակուլտետների առաջադրած սովորողների թեկնածություններից ընտրում է խորհրդի անդամներին, ներկայացնում լիազոր մարմին:

Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը հիմնադրի ներկայացուցիչներն են, որոնք առաջադրվում են Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի կողմից՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանցից:

Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը լիազորված մարմնի ներկայացուցիչներն են, որոնք առաջադրվում են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտներից ճանաչված գործիչներից, ինչպես նաև ճանաչված գործատուներից:

Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը:

Համալսարանի խորհուրդը ձևավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար:

Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող (ղեկան, ամբիոնի վարիչ, դասախոս): Խորհրդի նախագահը նույն բուհում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:

Համալսարանի խորհրդի նախագահը նախապատրաստում է խորհրդի նիստերը, ղեկավարում դրանք, ստորագրում խորհրդի արձանագրությունները և որոշումները, իրականացնում աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ: Համալսարանի խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք:

Համալսարանի խորհրդի անդամների իրավասությունը նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, որոշումների ընդունման, նիստերի արձանագրման կարգը սահմանվում են խորհրդի աշխատակարգով:

Համալսարանի խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարին մեկ անգամ:

Համալսարանի խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, համալսարանի ռեկտորի, համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

Համալսարանի խորհրդի նիստերը համարվում են իրավագոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը:

Համալսարանի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե նույն կանոնադրությամբ կամ խորհրդի որոշմամբ այլ բան չի նախատեսվում: